ՎՐԱՍՏԱՆ

«ՖՐԱՆՏԱՆՈ» (ՆԱՖԱՐՈՅԼՈՎ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 15 - 16 (16716) ՇԱԲԱԹ 23 ՓԵՏՐՎԱՐԻ 2019 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ

ՎՐԱՍՏԱՆ - ԱՄՆ

«ՄԵՐ ՄԻՋԵՎ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՄԵՆԱԲԱՐՁՐ ՑՈՒՑԱՆԻՇԻ ՎՐԱ ԵՆ»

Ինչպես արդեն հաղորդել ենք, Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեն մասնակցեց Մյունխենում անցկացված անվտանգության 55-րդ խորհրդաժողովի աշխատանքին: Այցի շրջանակներում, Վրաստանի վարչապետը անցկացրեց մի շարք հանդիպումներ: Մասնավորապես, նա հանդիպում ունեցավ ԱՄՆ փոխնախագահ Մայքլ Փենսի, պաշտպանության քարտուղար Պատրիկ Շենահանի հետ:

Վրաստանի վարչապետի եւ ԱՄՆ փոխնախագահի կարճատեւ հանդիպմանը, կողմերն ընդգծել են, որ Վրաստանի եւ ԱՄՆ-ի միջեւ առկա ռազմավարական գործընկերությունն ու հարաբերությունները շատ բարձր մակարդակի են:

- ԱՄՆ-ը մեր ռազմավարական գործընկերն է, եւ Վրաստանի ու ԱՄՆ-ի միջեւ հարաբերությունները ամենաբարձր ցուցանիշի վրա են: Սա միայն իմ կարծիքը չէ, սա բոլոր փորձագետների գնահատականներն են:

Քանի որ մեր երկկողմ հարաբերությունները խորանում են նման ձեւով, մենք անում ենք երկարատեւ կանխատեսումներ: Հնգամյա ծրագիրը հենց դա է, եւ դրանում լինելու են շատ կարեւոր կետեր, որոնք երկու երկրների հետաքրքրությունների մեջ են,- հանդիպման ավարտից հետո հայտարարեց Մամուկա Բախտաձեն:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ ԵՎ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ

Ինչպես արդեն հաղորդել ենք, Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին, նախագահի կարգավիճակում առաջին պաշտոնական այցը կատարեց Բրյուսել, որտեղ հանդիպումներ ունեցավ Եվրամիության եւ ՆԱՏՕ-ի պաշտոնատար անձանց հետ: Շարունակելով Եվրամիության եւ Եվրատլանտյան կուրսի հաստատման քաղաքականությունը՝ Վրաստանի նախագահը փետրվարի 19-21-ը պաշտոնական այցով գտնվում էր Ֆրանսիայում ու Գերմանիայում:

Ֆրանսիայում այցի շրջանակներում, Սալոմե Զուրաբիշվիլին հանդիպումներ ունեցավ Ֆրանսիայի Սենատի նախագահ Ժերար Լարշենի, Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի հետ: Փարիզի Ելիսեյան պալատում Վրաստանի եւ Ֆրանսիայի նախագահների հանդիպմանը, երկու երկրների նախագահները ստորագրեցին համագործակցության՝ «Դիմիտրի Ամիլախվարու անվան վրաց-ֆրանսիական երկխոսության» հռչակագրի հիմնադրումը: Նշված նախաձեռնության հիմքը դրվել է 2018 թվականի մայիսին, Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Ժան-Իվ Դրիանի Վրաստան այցի շրջանակներում: Ձեւաչափի հիմնադրումն ընդգծում է Վրաստանի եւ Ֆրանսիայի միջեւ բարձրաստիճան քաղաքական երկխոսության կարեւորությունը, որը պայմանավորված է ակտիվացված երկկողմ համագործակցության որակը նոր փուլ տեղափոխելու կարիքով:

Գերմանիայում Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին հանդիպումներ ունեցավ Գերմանիայի Դաշնային Հանրապետության նախագահ Ֆրանկ Վալտեր Շտայնմայերի, կանցլեր Անգելա Մերկելի հետ:

Եվրամիության երկու առա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

2019-Ը՝ ԹՈՒՄԱՆՅԱՆԱԿԱՆ ՏԱՐԻ

ԹՈՒՄԱՆՅԱՆ՝ ԱՆՑՅԱԼ, ՆԵՐԿԱ, ԳԱԼԻՔ...



Փետրվարի 19-ին՝ Ամենայն Հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանի ծննդյան օրը, նրա թիֆլիսյան բնակարանում ընթացք տրվեց Թբիլիսիում Մեծ բանաստեղծի 150-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառումների շարքին:

ԲԱՆԱՍՏԵՂԾԸ «ԲԱԶՄԵՑ» ԻՐ ԹԲԻԼԻՍՅԱՆ ՊԱՏՇԳԱՄԲՈՒՄ

Օրը մեկնարկեց մայրաքաղաքի Սոլոլակ թաղամասի Ամաղլեբելի 18-ի երրորդ հարկում գտնվող «Թումանյանի տանը» ամիսներ առաջ ձեւավորված հոբելյանական հանձնախմբի անդամների նիստով, որին ներկա էին նաեւ Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Ռուբեն Սադոյանը: Թբիլիսիից ուղիղ կապ հաստատվեց Երեւանի եւ բանաստեղծի ծննդավայր Լոռու մարզի Դսեղի տուն-թանգարանների հետ: Ներկաները ծանոթացան ինչպես օրվա, այնպես էլ՝ տարվա հոբելյանական ծրագրերին:

Ավանդույթի համաձայն, հյուրերը հավաքվեցին թեյի սեղանի շուրջ, որին եւ հաջորդեց օրվա խորհուրդ-անակնկալը: Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Դավիթ Ճիճինաձեի կողմից «Հովհ. Թումանյանի տանը» նվիրվեց Ամենայն Հայոց բանաստեղծի բրոնզաձույլ, 1,6 մետր բարձրությամբ քանդակը՝ քանդակագործ Դավիթ Սիրբիլաձեի հեղինակությամբ: Բանաստեղծի արձանը բազմեց իր տան սիրելի անկյունում՝ պատշգամբում:

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ՝ ՄԵԾՆ ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ԾՆՆԴԱՎԱՅՐՈՒՄ

Փետրվարի 19-ին, Ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանի 150-ամյակի առիթով, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը տիկնոջ՝ Աննա Հակոբյանի եւ դստեր հետ, այցելեց Հովհաննես Թումանյանի ծննդավայր Դսեղ:

Նիկոլ Փաշինյանը ծաղիկներ դրեց հայ մեծանուն բանաստեղծի կիսանդրու առաջ եւ շրջայց կատարեց տուն-թանգարանի տարածքում, ծանոթացավ գրողի կյանքն ու գործունեությունը ներկայացնող մոտ 300 մեծարժեք ցուցանմուշին:

Նիկոլ Փաշինյանը հանդես եկավ խոսքով, որտեղ մասնավորապես նշեց. «Կա Մեծարենց, կա Տերյան եւ բազում ուրիշ պոետներ կան, բայց Թումանյանն է անհաս Արարատը մեր նոր քերթության»: Այս տողերի հեղինակը Եղիշե Չարենցն է եղել: Հաճախ չի պատահում, որ պոետը պոետի մասին գովասանքի խոսքեր ասի, բայց սա գովասանքի խոսք չէ, սա խոնարհումի խոսք է եւ վկայությունն այն բանի, որ մեր ունեցած Արարատը մեկը չէ:

(Շարունակությունը՝ 7-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ԸՆԴԳԾՎԵՑ ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՐՏԱՑՄԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Փետրվարի 21-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը հանդիպում ունեցավ պաշտոնական այցով Հայաստանում գտնվող Վրաստանի պաշտպանության նախարար Լեւան Իզորիայի եւ նրա գլխավորած պատվիրակության անդամների հետ:

Վարչապետը ողջունել է Վրաստանի պաշտպանական գերատեսչության պատվիրակության այցը Հայաստան՝ կարեւորելով երկու երկրների միջեւ տարբեր ոլորտներում եղբայրական հարաբերությունների սերտացումը եւ զարգացումը: Նիկոլ Փաշինյանն անդրադարձել է այս տարվա հունվարին Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեի հետ Բոլնիսիում կայացած հանդիպմանը՝ նշելով, որ

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՍՏՈՐԱԳՐՎԵՑ ՌԱԶՄԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Փետրվարի 20-21-ը, Հայաստանի պաշտպանության նախարար Դավիթ Տոնոյանի հրավերով, պաշտոնական այցով Հայաստանում էր գտնվում Վրաստանի պաշտպանության նախարարության պատվիրակությունը՝ նախարար Լեւան Իզորիայի գլխավորությամբ:

Այցի շրջանակներում, երկու երկրների պաշտպանության նախարարները ստորագրեցին 2019 թվականին պաշտպանական գերատեսչությունների միջեւ համագործակցության երկկողմ համաձայնագիր:

Ստորագրման արարողությունից հետո կայացած մամուլի ասուլիսում Հայաստանի պաշտպանության նախարար Դավիթ Տոնոյանը նշեց.

- Քննարկեցինք Հայաստանի Հանրապետության եւ Վրաստանի երկկողմ հարաբերություններին վերաբերող հարցերը պաշտ-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ ԵՎ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ջատար երկրների ղեկավարների հետ հանդիպումներում Վրաստանի նախագահը քննարկեց Եվրամիությանն ու Հյուսիսատլանտյան դաշինքին Վրաստանի անդամակցության հեռանկարները, Վրաստանի համար կենսական նշանակություն ունեցող հարցի՝ տարածքային ամբողջականության վերականգնման հարցի կարգավորման գործում Եվրամիության, մասնավորապես՝ Ֆրանսիայի եւ Գերմանիայի ակտիվ մասնակցության հնարավորությունները: Հանդիպումներում առանձնակի ուշադրություն է հատկացվել Հարավային Կովկասում, մասնավորապես՝ Վրաստանում Ռուսաստանի վարած քաղաքականության թեմային:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԼՍՈՒՄՆԵՐ

ՄԱՅԱ ՅՔԻՏԻՇՎԻԼԻ. «ԵՆԹԱԿԱՌՈՒՑՑԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԵՐՈՒՄ ԱՅՍ ՏԱՐԻ ԾՐԱԳՐՎԱԾ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ ԿԿԱԶՄԵՆ 2 ՄԻԼԻԱՐԴ ԼԱՐԻ»

Վրաստանի տարածաշրջանային զարգացման եւ ենթակառույցների նախարար Մայա Յքիտիշվիլին, փետրվարի 20-ին հանդես գալով խորհրդարանում, հայտարարեց, որ 2018 թվականին իր գլխավորած գերատեսչության կողմից ենթակառույցային նախագծերի իրականացման համար ծախսվել է ռեկորդային՝ 1 միլիարդ 662 միլիոն լարիի գումար:

- Տարվա ընթացքում, Վրաստանի բոլոր տարածաշրջանում ավարտվել կամ ընթացքի մեջ է ավելի քան 1200 նախագիծ: Միջգերատեսչական հաստատությունների տվյալներով, միացյալ ջրամատակարարման ընկերության բյուջեն ավելացել է 31 տոկոսով, այս տարի այն կկազմի 218 միլիոն լարի, 46 տոկոսով ավելացել է մունիցիպալային զարգացման հիմնադրամի ֆինանսավորումը: Այն գերազանցել է 400 միլիոն լարիի նշագիծը: Ամենանշանակալի բյուջեն սահմանված է ավտոմոբիլային ճանապարհների դեպարտամենտի համար: Այն կազմում է 1 միլիարդ 302 միլիոն լարի,- հայտարարեց Մայա Ցքիտիշվիլին եւ հավելեց, որ 2019 թվականին ենթակառույցային նախագծերի իրականացման վրա կծախսվի 2 միլիարդ լարիի ներդրում:

Նախարարի հավաստմամբ, ենթակառույցների զարգացմանն ուղղված միջոցների իրացման դինամիկան տարեցտարի աճում է:

- Այսպես, 2017 թվականին առաջին անգամ ծախսերի դյուրացման փաստացի աճը կազմել է 40 տոկոս, հաջորդ տարիներին այն ավելացել է եւս 20-ական տոկոսով: 2018 թվականին, ընդհանուր առմամբ, իրացվել է 1 միլիարդ 662 միլիոն լարի,- հայտարարեց Մայա Ցքիտիշվիլին:

Անդրադառնալով գյուղի աջակցության ծրագրի իրականացման գործընթացին՝ Վրաստանի տարածաշրջանային զարգացման եւ ենթակառույցների նախարարը նշեց, որ բնակչությունը առավելագույնս պետք է ներգրավված լինի առաջնահերթությունների ընտրության հարցում:

- Եվ ոչ միայն մունիցիպալիտետներում, այլեւ անմիջականորեն գյուղերում: Անցյալ տարի վերականգնված գյուղի աջակցության ծրագիրը ցույց տվեց, որ տեղում մարդիկ շատ ավելի քաջատեղյակ են, թե ինչ է անհրաժեշտ անել,- նշեց նախարարը եւ հավելեց, որ ծրագրի շրջանակներում երկու ամսվա ընթացքում անցկացվել է շուրջ 2100 գյուղական ժողով, որտեղ բնակիչներն իրենք են նշել ենթակառույցային առաջնահերթությունները:

- Նման ակտիվությունը պայմանավորված էր նրանով, որ մենք կրկնապատկել ենք «Գյուղի աջակցության ծրագրի» բյուջեն, ինչը նշանակում է, որ արդեն այս տարի գյուղերում շատ ավելի նշանակալից նախագծեր կիրականացվեն,- հայտարարեց Մայա Ցքիտիշվիլին:

ՍԻՄՈՆ ԿԻԼԱՋԵ

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

250 ՄԻԼԻՈՆ ԵՎՐՈ՝ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿԻՑ

Փետրվարի 19-ին, Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեի եւ Եվրոպական ներդրումային բանկի (EIB) փոխնախագահ Վազիլ Խուդակի հանդիպման ժամանակ, քննարկվել է EIB-ի կողմից 250 մլն եվրո չափով վարկ տրամադրելու հարցը:

Հանդիպմանը քննարկվել են տրանսպորտային եւ մունիցիպալ ենթակառուցվածքների արդիականացման, փոքր եւ միջին ձեռնարկատիրությանն աջակցելու հարցերը եւ էներգետիկ անվտանգության ուղղությամբ համագործակցությունը, ինչպես նաեւ Վրաստանում Եվրոպական ներդրումային բանկի կողմից ֆինանսավորված այլ կարեւոր ծրագրեր:

Վրաստանի հանրային սեկտորում՝ Եվրոպական ներդրումային բանկի կողմից ֆինանսավորված ներդրումային նախագծերի ծավալը, այսօրվա դրությամբ, կազմում է մոտ 1,33 մլրդ, իսկ մասնավոր սեկտորում՝ 215,8 մլն եվրո:

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ԸՆԴԳԾՎԵՑ ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՐՏԱՑՄԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Հայաստանի եւ Վրաստանի միջեւ առկա ներկայիս բարեկամական, աշխատանքային մթնոլորտը լավագույնս կխթանի համագործակցության ընդլայնումն ու նոր մակարդակի կբարձրացնի այն:

Իր հերթին, Լեւան Իզորիան կարեւորեց Հայաստանի պաշտպանության նախարարի հետ հանդիպումն ու դրա արդյունքներով պաշտպանության ոլորտում երկկողմ համագործակցության 2019թ. ծրագրի ստորագրումը: Նրա խոսքով, Վրաստանը շահագրգռված է ամրապնդել եւ խորացնել բարեկամ Հայաստանի հետ հարաբերությունները եւ պատրաստ է շարունակել արդյունավետ փոխգործակցությունն այդ ուղղությամբ:

Զրուցակիցները քննարկեցին վրաց-հայկական պաշտպանական համագործակցության օրակարգին վերաբերող հարցեր:

Կողմերը մտքեր փոխանակեցին տարածաշրջանային անվտանգության եւ կայունության ապահովման, հակամարտությունների խաղաղ կարգավորման հարցերի շուրջ:

ՍՏՈՐԱԳՐՎԵՑ ՌԱԶՄԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

պանության բնագավառում: Ստորագրեցինք Հայաստանի եւ Վրաստանի միջեւ 2019թ. ռազմական համագործակցության ծրագիրը, որը ստորագրվում է 2010թ. սկսած: Այն այս տարի հագեցած է պաշտպանության բնագավառի միջոցառումներով: Հայաստանը եւ Վրաստանը փոխադարձաբար ընկալում եւ հարգում են միմյանց նախապատվություններն ու հավատում ապագայում ավելի անվտանգ եւ բարեկեցիկ Հարավային Կովկաս ունենալու գաղափարին,- ասաց Հայաստանի պաշտպանության նախարարը:

Իր հերթին, Վրաստանի պաշտպանության նախարարը նշեց, որ վրացական կողմը պատրաստ է մի շարք ոլորտներում իր փորձը կիսել հայկական զինված ուժերի հետ:

- Վրացական կողմը պատրաստ է իր փորձը կիսել հայկական կողմի հետ: Վրացական կողմը հաջողությամբ կիսում է իր փորձը ՆԱՏՕ-ի անդամ մի շարք երկրների հետ: Ես գնահատում եմ հայ զինծառայողների մասնակցությունը Վրաստանում կայացած «Վեհանձն գործընկեր 2018» միջոցառմանը, որ տեղի է ունեցել ՆԱՏՕ-ի հովանու ներքո եւ ներգրավում է մի շարք գործընկերների,- ասաց Լեւան Իգորիան:

Ստորագրված համաձայնագրի շրջանակում, պլանավորվում է կազմակերպել բարձր մակարդակի փոխադարձ այցեր, համագործակցել ռազմական կրթության եւ իրավունքի բնագավառում: Վերջին անգամ Հայաստանի եւ Վրաստանի պաշտպանական գերատեսչությունների միջեւ համագործակցության երկկողմ համաձայնագիր է ստորագրվել 2016 թվականին Թբիլիսիում Հայաստանի պաշտպանության նախկին նախարար Վիգեն Սարգսյանի եւ Լեւան Իզորիայի միջեւ:

Ավելացնենք, որ սա Վրաստանի պաշտպանության նախարարի առաջին այցն է Հայաստան, այդ պաշտոնում նշանակվելուց հետո:

Այցի շրջանակներում, Վրաստանի պաշտպանության նախարար Լեւան Իզորիան հանդիպում ունեցավ նաեւ Հայաստանի արտաքին գործերի նախարար Զոհրաբ Մնացականյանի հետ, պատվիրակության անդամների հետ այցելեց Ծիծեռնակաբերդի հուշահամալիր եւ հարգանքի տուրք մատուցեց Հայոց ցեղասպանության սրբադասված նահատակների հիշատակին:



ՌՈՒՍԱՍՏԱՆ ՍՊԱՌՆԱԼԻՔԻ ԴԵՊՔՈՒՄ ՀՐԹԻՌՆԵՐԸ ԿՈՒՂՂՎԵՆ ԱՄՆ-Ի ՎՐԱ

Փետրվարի 20-ին Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը հանդես եկավ Դաշնային ժողովին հղված ուղերձով:

Խոսելով միջին եւ փոքր հեռահարության հրթիռների մասին պայմանագրից ԱՄՆ-ի դուրս գալու մտադրության մասին՝ Վլադիմիր Պուտինը հայտարարեց, որ եթե այդ հրթիռները տեղակայվեն Եվրոպայում, ապա Ռուսաստանն իր զենքով նշանառության տակ կպահի ոչ միայն այն երկրները, որտեղ ԱՄՆ-ը կտեղակայի միջին եւ փոքր հեռահարության հրթիռներ, այլեւ, սպառնալիքի դեպքում՝ հենց ԱՄՆ-ը:

- Ռուսաստանը մտադիր չէ առաջինը նման հրթիռներ տեղակայել Եվրոպայում: Բայց, եթե դրանք արտադրվեն եւ մատակարարվեն Եվրոպային, այդ դեպքում, մենք հարկադրված կլինենք նախատեսել հայելային եւ անհամաչափ գործողություններ,- նշեց Պուտինը:

Նշենք, որ Պուտինի սույն հայտարարությունը լայն արձագանք է առաջացրել: Արեւմուտքը, մասնավորապես՝ ԱՄՆ-ը այն ընկալել են որպես անմիջական սպառնալիք եւ մտադիր են կոնկրետ քայլեր ձեռնարկել այն կախնելու համար:

ԱՄՆ ՍԻՐԻԱՅԻՑ ԶՈՐՔԵՐԸ ԴՈՒՐՍ ԿԲԵՐՎԵՆ ԻՐԱՔԻ ՏԱՐԱԾՔՈՎ

Բաղդադը եւ Վաշինգտոնը համաձայնության են հասել, որ Սիրիայից ԱՄՆ զորքերի դուրսբերումը կիրականացվի Իրաքի տարածքով: Վաշինգտոնը Բաղդադին հավաստիացրել է, որ Սիրիայից ԱՄՆ զորքերի դուրսբերումը պետք է ավարտվի Արեւելյան Եփրատի շրջանում նրանց գործողության ավարտվելուց հետո, բայց ապրիլի 1-ից ոչ ուշ:

ՎԵՆԵՍՈՒԵԼԱ ԵՎՐԱԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՄՈՒՏՔԸ ԱՐԳԵԼԵԼ ԵՆ

Վենեսուելան Եվրախորհրդարանի պատգամավորներին չի թողել մուտք գործել երկիր: Պաշտոնական Կարակասը դրա պատճառը համարում է «դավադիր նպատակները»:Նշենք, որ «Եվրոպայի ժողովրդական կուսակցության» չորս պատգամավոր Վենեսուելա էր ուղեւորվել ժամանակավոր նախագահ ճանաչված Խուան Գուայդոյի հրավերով:

Ճաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

ՄԵԿՆԱՐԿԵՑ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՅՈԹԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ

Փետրվարի 19-ին Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեն մասնակցեց կլիմայական փոփոխությանը հարմարվելու յոթամյա ծրագրի հանրային քննարկման ներկայացման շնորհանդեսին:

Նրա խոսքով, Վրաստանի կառավարությունը սկսում է 70 միլիոն դոլար արժողության յոթամյա ծրագիր՝ ուղղված կլիմայի փոփոխության ծագած տարերային աղետներից Վրաստանի բնակչության պաշտպանությանը: Լայնամասշտաբ ծրագրի ֆինանսավորումը ներառում է 27 միլիոն դոլարի Giant Green Fund (GCF) դրամաշնորհը, 38 միլիոն դոլարի Վրաստանի կառավարության ներդրումը եւ Շվեյցարիայի կառավարության 5 միլիոն դոլարի դրամաշնորհը: Ծրագիրն իրականացվելու է UNDP-ի աջակցությամբ, իսկ անմիջական կատարողները Վրաստանի բնապահպանության եւ գյուղատնտեսության նախարարությունն է՝ պետական մյուս գերատեսչությունների համագործակցությամբ:

ՀԱՆԴԻՊՈՒՄ

ՔԵԹԵՎԱՆ ՅԻԽԵԼԱՇՎԻԼԻ. «ՄԵՐ ՆՊԱՏԱԿԸ ԲԱԶՄԱԴԱՐՅԱ ԽԱՂԱՂ ՀԱՄԱԿԵՑՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄՆ Է»

Փետրվարի 21-ին Վրաստանի հաշտեցման եւ քաղաքացիական հավասարության հարցերով նախարար Քեթեւան Ցիխելաշվիլին եւ փոխնախարար Լիա Գիգաուրին մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակին կից գործող ազգային փոքրամասնությունների խորհրդի եւ պետական միջգերատեսչական հանձնաժողովի անդամներին են ներկայացրել քաղաքացիական հավասարության ու ինտեգրման պետական ռազմավարության 2018 թվականի ծրագրի իրականացման հաշվետվությունն ու 2019-ի առաջնահերթությունները:

Պետնախարարի խոսքով, վերջին շրջանում փորձեր են արվում արտաքին զգայուն որոշ հարցեր, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը ներքին հարաբերությունների դաշտ բերել՝ դրանցում ներքաշելով նաեւ մեր էթնիկ խմբերին: Նա ընդգծեց, որ անընդունելի են նման երեւույթներն առաջին հերթին ազգությամբ հայ եւ ադրբեջանցի Վրաստանի քաղաքացիների համար, որոնք վրացիների հետ միասին ապրում, աշխատում ու նպաստում են երկրի զարգացմանը:

- Մեր արտաքին դիրքորոշումը հստակ է, հարեւանների հետ հարաբերությունները չափազանց կարեւոր են: Ավելին, Վրաստանը պատրաստակամություն է հայտնում լինել խաղաղության հարթակ: Այս ամենը արտաքին քաղաքականության մաս է, կապ չունի ներքինի հետ, որտեղ մեր նպատակը բազմադարյա խաղաղ համակեցության պահպանումն է,- ասել է պետնախարարը:

Հանդիպման ընթացքում, քննարկվեցին էթնիկ փոքրամասնություններին խնդիրների ուղղությամբ իրականացված միջոցառումները, մամուլի եւ տեղեկատվության հասանելիության եւ գենդերային հավասարության ապահովման մասին հարցերը:



ԲԱՆԱԿՈՒՄ ՉԾԱՌԱՅԱԾ ՏՂԱՄԱՐԴԻԿ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՉԵՆ ՎԵՐՑՎԻ

Վրաստանի կառավարությունը պատրաստել է օրինագիծ այն տղամարդկանց պետական ծառայության ընդունելու արգելքի մասին, որոնք պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն չեն անցել:

Օրինագծին կից գրության մեջ ասված է, որ սույն նախաձեռնությունը նպատակամիտված է «զորակոչի եւ զորահավաքի կատարելագործմանը»:

ԱՃԵԼ Է ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ

Վրաստանում գործազրկության մակարդակը, 2018 թվականի չորրորդ եռամսյակի տվյալներով, նախորդի համեմատ աճել է 0,1 տոկոսով՝ կազմելով 12,3 տոկոս: Այս մասին հայտարարեց վիճակագրության ազգային ծառայության գործադիր տնօրեն Գոգիտա Թոդրաձեն:

- 2018 թվականի գործազրկության մակարդակի մանրամասն տեղեկատվությունը հասանելի կլինի ընթացիկ տարվա մայիսի 17-ին: Սակայն, վերլուծելով տվյալները, եռամսյակային հետազոտության արդյունքները մեզ հնարավորություն են տալիս խոսել մի քանի կարեւոր կետերի մասին,- ասել է Թոդրաձեն:

ՏՈՒԳԱՆՔ՝ ԾԽԱԽՈՏԸ ԳՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Վրաստանի շրջակա միջավայրի պահպանության եւ գյուղատնտեսության բնապահպանական վերահսկողության վարչությունը 2019 թվականի հունվարի 1-ից թափոնների կառավարման օրենսգրքի խախտման 305 փաստ է արձանագրել:

Նույն ժամանակահատվածում, չսահմանված վայրում ծխախոտ նետելու 161 արձանագրություն է կազմվել, իսկ նյութերը ուղարկվել են համապատասխան ատյաններ հետագա վերանայման համար:

Մինչեւ 2 կգ աղբի նետման համար նախատեսվում է 80 լարիի վարչական տուգանք, իսկ ավտոմեքենայից նույն գործողությունն իրականացնելու համար՝ 120 լարիի:

ՖԻՆԱՆՍՆԵՐ

ՄԵԿ ՄԻԼԻՈՆ ԼԱՐԻԻ ՏՈՒԳԱՆՔԸ ՀԱՆԳԵՑՐԵՑ «TBC» ԲԱՆԿԻ ՎԵՐԱՀՍԿԻՉ ԽՈՐՀՐԴԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆԸ

Վերջին ժամանակներում լայն արձագանք է առաջացրել «TBC» բանկի շուրջ ծավալվող իրադարձությունները: Նշենք, որ Վրաստանի դատախազությունը սկսել էր բանկի գործունեության հետ կապված 11-ամյա վաղեմության գործարքի օրինականության հարցի հետաքննությունը: Վրաստանի Ազգային բանկի տեղեկատվության համաձայն, «TBC» բանկը թույլ էր տվել խախտում, ինչը հանգեցրել էր Ազգային բանկի կողմից վերոնշյալ հաստատության մեկ միլիոն լարիի տուգանքի:

Երկրի դատախազության եւ Ազգային բանկի կողմից «TBC» բանկի նկատմամբ իրականացված գործողությունների արդյունքում, «TBC» բանկի ղեկավարության հայտարարության համաձայն, հաստատությունը ներդրումների տեսքով կորցրել է գրեթե 200 միլիոն դոլար: Հաշվի առնելով ստեղծված իրավիճակը՝ «TBC» բանկի Վերահսկիչ խորհրդի նախագահ Մամուկա Խազարաձեն եւ խորհրդի փոխնախագահ Բադրի Զափարիձեն ընդունեցին պաշտոնաթողության որոշում: Ընդորում, Մամուկա Խազարաձեն մտադիր չէ հրաժարվելու բանկում ունեցած իր բաժնետոմսերից:

Ավելացնենք, որ Վրաստանի Ազգային բանկը ողջունում է որոշումը, որ «ԹիԲիՍի» բանկի հիմնադրամի բաժնետերերը ներկայացված չեն լինի «ԹիԲիՍի» բանկի վերահսկիչ խորհրդում:

Նշենք, որ Ազգային բանկի կայք-էջում հրապարակված տվյալներով, 2018թ. վերջին Խազարաձեն բաժնետոմսերի 13,52 տոկոսի սեփականատերն էր: Վերահսկիչ խորհրդի նախագահի տեղակալ Բադրի Զափարիձեի սեփականությունում է ակցիաների 6,76 տոկոսը:

Բանկի բաժնետոմսերի ավելի քան հինգ տոկոսի սեփականատերերն են ֆինանսական միջազգային կազմակերպությունները եւ ներդրումային ընկերությունները՝ Վերակառուցման եւ Զարգացման Եվրոպական բանկը (EBRD)՝ 8,17%, Ջիֆիմորգան էսեթ Մենեջմենթ (JPMorgan Asset Management)՝ 8,39%, Schroder Investment Management՝ 7,07%; Dunross & Co.՝ 5.50%:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ

ՏԱՊԱԼՎԱԾ ՕՐԻՆԱՆԱԽԱԳԻԾԸ՝ ՊԱՌԱԿՏՄԱՆ ՊԱՏՃԱՌ

Փետրվարի 21-ին Վրաստանի խորհրդարանը իր լիագումար նիստում քննության առավ երկու աղմկահարույց օրինանախագիծ. «Դատարանների մասին օրենքի փոփոխությունների» նախագծի նախաձեռնությամբ հանդես էր եկել «Վրացական երազանք» կառավարող կուսակցության խորհրդարանական խմբակցության ինը պատգամավոր, իսկ նախկին նախագահ Միխեիլ Սաակաշվիլու ռեժիմը հանցավոր հայտարարելու մասին նախագիծը առաջադրել էր «Հայրենասերների ալյանսը»:

Հիշեցնենք, որ «Երազանքի» 9 պատգամավորի կողմից ստորագրած նախագիծը նախատեսում էր անժամկետ դատավորների նշանակումը հետաձգել մինչեւ 2024 թվականի դեկտեմբերի 31-ը, ինչը նախագծի հեղինակների կարծիքով, հնարավորություն կտար առավել հանգիստ ու հավասարակշռված լուծում հաղորդել հասարակության շրջանում լայն արձագանք առաջացրած այդ հարցին: «Հայրենասերների ալյանսի» խմբակցության կողմից ներկայացված օրինանախագիծը նախատեսում էր «հանցավոր ու անձնիշխանական» ճանաչել «Միասնական ազգային շարժման» կառավարման տարիներին Վրաստանում հաստատված ռեժիմը, ինչպես նաեւ արդարության վերականգնումը, հանցագործությունների հետաքննումը եւ մեղավորներին պատժելը: Նախագծի համաձայն, դատախազությանը հանձնարարվում էր վեց ամսվա ընթացքում ավարտին հասցնել նախկին իշխանության ղեկավարների դեմ հարուցված բոլոր քրեական գործերը:

Սուր քննարկումներից հետո, խորհրդարանը՝ 45 կողմ, 17 դեմ ձայներով, մերժեց «Դատարանի մասին» ներկայացված օրինանախագիծը, ինչը դարձավ լուրջ պառակտման պատճառ կառավարող թիմում: Այսպես, «Երազանքի» հիմնադիրներից էկա Բեսելիան հայտարարեց կուսակցությունից դուրս գալու մասին:

Խորհրդարանի կողմից՝ 45 կողմ եւ 16 դեմ ձայներով, մերժվեց նաեւ «Հայրենասերների ալյանսի» ներկայացրած օրինանախագիծը: Թեպետ, ինչպես քվեարկությունից առաջ ասաց խորհրդարանի նախագահ Իրակլի Կոբախիձեն. «Մենք, ընդհանուր առմամբ, պաշտպանում ենք բանաձեւի բովանդակությունը, ինչպես նաեւ այն կարծիքը, որ 2004-2012 թվականների ռեժիմը հանցավոր էր: Սակայն, մենք դիտողություններ ունենք բանաձեւի իրավական մասի վերաբերյալ: Եթե այդ մասը վերանայվի, ապա մենք պատրաստ ենք վերստին քննարկել նման բանաձեւի ընդունումը»:

Երեկ կուսակցությունից դուրս գալու մասին հայտարարեց նաեւ պատգամավոր Բեքա Նացվլիշվիլին:

Այսպիսով, այսօրվա դրությամբ, տարբեր պատճառներով խորհրդարանական մեծամասնությունից արդեն դուրս են եկել մի շարք պատգամավորներ: Արդյունքում «Երազանքը» կորցրեց սահմանադրական մեծամասնությունը, թեպետ, կառավարող թիմում ստեղծված իրավիճակը, տարբեր հարցերի շուրջ անհամատեղելի տարակարծությունը կարող են լուրջ հիմնախնդիրներ առաջացնել «Երազանքի» համար:

ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆ

2019-Ը՝ ԹՈՒՄԱՆՅԱՆԱԿԱՆ ՏԱՐԻ

ԹՈՒՄԱՆՅԱՆ՝ ԱՆՑՅԱԼ, ՆԵՐԿԱ, ԳԱԼԻՔ...

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ԳԻՐՔ ՆՎԻՐԵԼՈՒ ԱՎԱՆԴՈՒՅԹԻՆ ՀԱՎԱՏԱՐԻՄ...

Այնուհետեւ, ներկաները շարժվեցին դեպի Թբիլիսիի Հայ գրողների ու հասարակական գործիչների Խոջիվանքի պանթեոն: Այստեղ, Հովհ.Թումանյանի շիրմի մոտ, կայացավ Գիրք նվիրելու ավանդական տոնը, որ Թբիլիսիում հիմք էր դրվել լուսահոգի բանաստեղծուհի, թարգմանչուհի Անահիտ Բոստանջյանի կողմից:

Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի նախագահությամբ եւ հոգեւոր դասի մասնակցությամբ Հովհաննես Թումանյանի շիրմաքարի մոտ կատարվեց հոգեհանգստյան կարգ, ծաղիկներ խոնարհվեցին հայոց մեծերի տապանաքարերին:

ՄԵԾԱՐԵԼՈՎ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ ՈՒ... ՆՐԱ ՀԵՏՔԵՐՈՎ

Հովհաննես Թումանյանի ծննդյան օրվան նվիրված միջոցառումը շարունակվեց Վրաստանի խորհրդարանի ազգային գրադարանի մեծ դահլիճում: Միջոցառմանը ներկա էին Վրաստանի խորհրդարանի պատգամավորներ, քույր եկեղեցիների առաջնորդներ, տարբեր կառույցների ներկայացուցիչներ: Դահլիճում «Լոռվա ձոր» հայրենակցական միության նախաձեռնությամբ եւ աջակցությամբ ցուցադրվեցին թբիլիսահայ ճանաչված նկարիչ Թենգիզ Միկոյանցի «Թումանյանի հետքերով» կտավները:

Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանի շնորհավորական ուղերձը, նվիրված հայ-վրացական բարեկամության մեծ ջատագով Հովհաննես Թումանյանի ծննդյան 150-ամյա հոբելյանին, ներկայացրեց Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Ռուբեն Սադոյանը: Իսկ Վրաստանի նախագահի խորհրդական Կոնստանտինե Նացվլիշվիլին փոխանցեց Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլու շնորհավորանքը:

Թումանյան համաժողովրդական բանաստեղծի, բազմաժանր գրողի, ակտիվ հասարակական գործչի եւ մարդ-քաղաքացու մեծությունը կարեւորեցին եւ շնորհավորանքի խոսք ասացին Վրաստանի գրողների միության համանախագահ Մաղվալա Գոնաշվիլին, «Լոռվա ձոր» հայրենակցական միության նախագահ Սերգո Երիցյանը, երեւանցի թումանյանագետ Սուսաննա Հովհաննիսյանը: Միջոցառմանը ներկա էր Թումանյանի ծոռնուհին՝ Ելենա Կոլեսնիկովան, իսկ թոռնուհին՝ Իրմա Սաֆրազբեկյանը, Գերմանիայից հղել էր իր շնորհավորանքի եւ երախտիքի ուղերձը:

Մենակատարներ Սվետլանա Տատոեւայի, Աննա Բադալյանի, Սիդա Բազոյանի, Իվանե Մկրտչյանի, Սուրբ Գեւորգ առաջնորդանիստ եկեղեցու «Մակար Եկմալյան» երգչախմբի կատարմամբ հնչեցին Թումանյանի անմահ ստեղծագործությունների մեղեդիները, հայերեն եւ վրացերեն ասմունքեցին Միեր Մելիքյանը, Նանո Պողոսովան, Գարրի Ղալամքարովը:

Հավարտ միջոցառման, օրհնության եւ գնահատանքի խոսքով հանդես եկավ թեմակալ առաջնորդ Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը: Նա հուշամեդալներ հանձնեց Հայաստանի կրթության եւ գիտության նախարար, Հովհաննես Թումանյանի տոնակատարության պետական հանձնաժողովի նախագահ Արայիկ Հարությունյանին, Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Դավիթ Ճիճինաձեին եւ IDeA («Հայաստանի զարգացման նախաձեռնություններ») հիմնադրամին (նախագահ՝ Ռուբեն Վարդանյան)՝ ի դեմս Արթուր Ամիրխանյանի: Թեմակալ առաջնորդը փոխանցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնությունը եւ շնորհավորանքը Հովհ. Թումանյանին նվիրված հոբելյանական միջոցառման կապակցությամբ:

Նշենք, որ Հովհաննես Թումանյանի եւ Կոմիտաս վարդապետի 150-ամյա հոբելյաններին նվիրված միջոցառումները վիրահայ համայնքում կշարունակվեն ողջ տարվա ընթացքում:

Հովհաննես Թումանյանի ծննդյան 150-ամյա հոբելյանի միջոցառումներին ներկա էին Հայաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի փոխնախարար Տիգրան Գալստյանը, այդ նախարարության խորհրդական Արուսյակ Տերչանյանը, նախկին սփյուռքի նախարարության մերձավոր սփյուռքի հետ կապերի բաժնի ղեկավար Տարոն Շագոյանը, «ՁԱՀ» բարեգործական միության նախագահ Սոս Սահակյանը, երեւանյան IDeA հիմնադրամի ներկայացուցիչ Արթուր Ամիրխանյանը: Միջոցառմանը մասնակցում էին նաեւ Վրաստանի խորհրդարանի մեծամասնական պատգամավորներ Դավիթ Ճիճինաձեն, Գիորգի Կոպաձեն, Հենզել Մկոյանը, պատգամավորներ Ռուսլան Պողոսյանը, Սամվել Մանուկյանը, Գիգի Բոկերիան, Սերգո Ռատիանին, Ախալցիխեի սակրեբուլոյի պատգամավոր Համբարձում Բաբոյանը, Ախալցիխեի փոխքաղաքապետ Ռուբեն Կարապետյանը, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը, Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնի գեղարվեստական ղեկավար Արմեն Բայանդուրյանը, Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության փորձագետ Կարինե Մանուկյանը, Վրաստանի կառավարության խորհրդարանի հետ կապի ծառայության աշխատակից Կարեն Եղիազարյանը, Վրաստանի հայերի միության նախագահ Հենրիխ Մուրադյանը: Միջոցառմանը ներկա էին նաեւ վրաց եւ վիրահայ մտավորականներ, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

* * *

Նույն օրը Թբիլիսիի Պ. Ադամյանի պետհայդրամայի թատրոնը Թբիլիսիի Նոդար Դումբաձեի անվան պատանի հանդիսատեսի թատրոնում ներկայացրեց Հովհաննես Թումանյանի «Գիքորը»:

«ՈՒՐԱԽ ԵՄ, ՈՐ ԳՏՆՎՈՒՄ ԵՄ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԹԻՖԼԻՍՈՒՄ...»

Լրացավ Ամենայն Հայոց բանաստեղծ, արձակագիր, ազգային եւ հասարակական գործիչ Հովհաննես Թումանյանի ծննդյան 150-ամյակը: Եվ ուրախ եմ, որ այսօր գտնվում եմ այն քաղաքում, ուր քառասուն տարի ապրել ու ստեղծագործել է Մեծն բանաստեղծը: Եվ, իհարկե, այս հոբելյանը հրաշալի առիթ է հիշելու հայ մեծ մտավորականին, գնահատանքի, երախտագիտության եւ մեծարանքի խոսքեր հնչեցնելու նրա հասցեին:

Հովհաննես Թումանյանն ամբողջ կյանքն ապրեց իր ժողովրդի ցավերով ու մտահոգություններով, ամենաճակատագրական պահերին եղավ նրա կարեկիցն ու սատարողը: Անվանի բանաստեղծի, հայ մեծ մտավորականի ստեղծագործական ուղին, հասարակական ու քաղաքական գործունեությունն արժանի է համընդհանուր գնահատանքի:

Թումանյանի պոեզիան եւ արձակը թափանցում է հայ մարդու հոգու մեջ՝ միաժամանակ դառնալով յուրաքանչյուրի ինչպես մանկության անբաժանելի մասը, այնպես էլ՝ ողջ կյանքի կարեւոր ուղենիշը:

Գնահատելի է հոբելյանական միջոցառման նման լայնածավալ եւ հիմնավոր լուսավորչական աշխատանքների կազմակերպումը, որն իրականացնում է Վիրահայոց թեմը Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիում եւ հայաբնակ շրջաններում: Ողջույններս եմ բերել Դսեղից ու Երեւանից, Հայաստանի մյուս քաղաքներից, ուր այսօր եւ այս ժամերին տեղի են ունենում բազմաթիվ միջոցառումներ՝ նվիրված Հովհաննես Թումանյանին:

Շնորհավորում եմ մեր ընթերցասեր հասարակությանը, Թումանյանի պոեզիայի երկրպագուներին մեծանուն բանաստեղծի հոբելյանի առիթով: Համոզված եմ, որ Թումանյանի ստեղծագործություններն ինչպես ներկա, այնպես էլ՝ ապագա բոլոր սերունդների համար, մշտապես հոգեհարազատ, ցանկալի եւ ոգեշնչող կլինեն:

Խոսքս ավարտեմ Թումանյանի քառյակներից մեկով. «Լինե՛ր հեռու մի անկյուն//Լինե՛ր մանկան արդար քուն//Երազի մեջ երջանիկ//Հաշտ ու խաղաղ մարդկություն»:

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Հայաստանի Հանրապետության կրթության եւ գիտության նախարար

ՏԻՖԻԱՆ ՏԱԲԻՋԵ. «...ՄԵԾ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՈՎՀԱՆՆԵՍԻՆ ՉԵՐ ԽԱՆԳԱՐՈՒՄ ՄՆԱԼ ՎՐԱՑԱՄԵՏ»

Ստորեւ ներկայացնում ենք վրաց հանրաճանաչ սիմվոլիստ գրող Տիցիան Տաբիձեի (1895-1937թթ.) հիշողությունները հայ մեծ բանաստեղծ, հասարակական գործիչ Հովհաննես Թումանյանի մասին:

«Հովհաննես Թումանյանը արդի իրականությունում պայծառ անձնավորություն էր: Նա, ով անգամ չէր ճանաչում Հովհաննեսին, որպես հիպերբոլա էր ընդունում նրա մասին ասված խոսքերը: Նրա անձնավորությունում մարդկային մեծ ջերմություն կար, ինչը հավիտենական բարեկամ է դարձնում բոլոր նրանց, ում հետ զրուցում էր:

Դա 1917 թվականի գարնանն էր: Նոր էի Մոսկվայից Թբիլիսի վերադարձել, ինձ հետ միասին ժամանել էր նաեւ հայտնի բանաստեղծ Կոնստանտին Բալմոնտը: Դա ուրախության եւ հեղափոխության ժամանակաշրջան էր:

Վրացական ակումբի այգում Սանդրո Ղանչելու հետ ընթրիքի ժամանակ, որը կազմակերպել էր Բալմոնտը, ես առաջին անգամ տեսա Հովհաննես Թումանյանին: Նա իրեն լրիվ ազատ ու անկախ էր պահում: Այնպես որ, Բալմոնտի հետ միասին ռուսերեն հանպատրաստից արտասանություններ էինք անում: Հանպատրաստության առարկան Փացա Ամիրաջիբու «Կանաչ պանտերան» էր: Մեկ ամիս անց, «Ռուսկոյե սլովո»-ում տպագրվեց Բալմոնտի «Քե'զ, Հովհաննես Թումանյան» բանաստեղծությունը:

Առաջին մարդը, որը բոլորից շատ էր հոգում հայ եւ վրաց ժողովուրդների եղբայրության հարցով, Հովհաննես Թումանյանն էր, եւ նրա անկեղծությանը հավատում էին Վրաստանում, ու դրա վկայությունը Թիֆլիսն էր՝ նրա 25-ամյա հոբելյանի ժամանակ:

Մեծ հայրենասիրությունը Հովհաննեսին չէր խանգարում մնալ վրացամետ:

Հանրահայտ էր, որ օսմանցիների հետ պատերազմի ժամանակ, երբ զոհվեց նրա ավագ որդին, Հովհաննես Թումանյանն իր վեց դուստրերին ուղարկեց ռազմաճակատ՝ որպես բուժքույր, եւ երբ սկսվեց վրաց-հայկական լարվածությունը հայ-վրացական սահմանին, նրա զավակներից ոմանք հայտնվեցին Երեւանում, Հովհաննես Թումանյանը զավակներին կարգադրեց չմասնակցել հակամարտությանը, հակառակ դեպքում, նա կնզովեր նրանց՝ դա մեծ սիրո ակտ էր:

Միաժամանակ պետք է ասել, որ Հովհաննես Թումանյանը, իրոք, հին նահապետական ազդեցություն ուներ հայ ազգի վրա: Նրան լսում էին ոչ միայն սովորական մարդիկ, այլեւ ժողովրդական ընտրյալները, ղեկավարները, ովքեր մշտապես համոզված էին իրենց հեղինակության մեջ: Հովհաննես Թումանյանի նման ազդեցությունն իր ազգի վրա, ինձ հիշեցնում էր Իլիա Ճավճավաձեի հեղինակությունը, որին իմ սերունդը գիտեր միայն պատմություններից:

Բացառիկ էր նաեւ Հովհաննեսի տրամադրվածությունը մեր բանաստեղծների նկատմամբ: Չի եղել ոչ մի հանդիպում, որ Հովհաննեսը չկանգներ մեր կողքին եւ չասեր իր խոսքը: Հիշում եմ, 1919 թվականի ապրիլի 2-ի իմ երեկոյին նա կարդաց իր պոեմը, որը լրիվությամբ նվիրված էր Վրաստանին եւ վրաց բանաստեղծներին: Երբ անց էին կացնում վրաց գրողների հոբելյանները, Հովհաննեսը մշտապես գալիս էր իր մագաղաթներով:

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)